


այդ եզական նախադասութիւն տեղական գէտքը
 և խիզարի գնացքը: Նրանց կեցուածքի մէջ ոչ
 վախի և ոչ ալ հնազանդութեան հետք կարելի
 է երեւակայել: Պէտք էր յիշել այս պարագան
 պարզելու համար միտքս: Չնայած որ Բրոնֆ.
 Սէյս Գրեթէ երեւան բերաւ Ուրարտու սրանից
 50 տարի առաջ, վերջին 30 տարուան մէջ նա
 գրեթէ անյեղկօրէն արհամարհանքով ու հեգ-
 նանքով կը գրէ խաւաքները մասին: Տասնեակ-
 ներով յօդուածներ կարող եմ յիշել PBAS-ի
 պրակներէն: Առայժմ բաւ է յիշել իր Ararat
 յօդուածը Dictionary of the Bible-ի մէջ: (1900.

Vol. I. էջ 127-28): Ինչո՞ւ այսպիսի վերաբերում
 ցոյց կու տան ընդհանրապէս անգլիացի և ֆրան-
 սացի հնաբանները Ուրարտուի կամ Հայաստանի
 վերաբերմամբ, իսկ ընդհակառակն շատ աւելի
 խորունկ հմտութեան տէր գերմանացիներ, ռու-
 սեր, և այլք, ընդհանրապէս երեւան կը բերեն
 անաչառ և առարկայական ուսումնասիրութիւն-
 ներ մեր անցեալի և ներկայի մասին:
 Այդ պատճառները մանրամասնօրէն քննա-
 եմ իմ ձեռագրիս մէջ, որ պիտի հրատարակուի
 ըստ կարգի:

Ա. ՍՍՅՐԱՍՏԵԱՆ



ԹՈՒՆՈՎԱՅԻ ԱՆՀԵՏԱՅԱԾ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՆՇԻԱՐՆԵՐ

Թոնովայի Ս. Աստուածածին աւերակ եկեղեցոյն գաւիթը գտնուող
 տապանագիրներուն պատձենները

(Նախորդ մասը տես «Բաղմալէպ» 1931, էջ 536)

Ա.

Այս է տապան Մղմցի Տէր Պօղոսի որդի Տէր
 Յարութիւն որ համգեաւ ի Բրիստոս թի ՌժԾ =
 (1701) իմ:

Բ.

Շոռոթեցի Տէր Յոհան
 ՌՄԺԿ = (1765)

Գ.

Վախճանի հայոց թվի ՌժՅԹ ի = (1730)
 ՍՊՏՔՐԻԳԻՆ

Դ.

Շունջ ի հող եղծայ
 որով եղէ ի մոյն դարձայ
 որդի կոչիմ Տէր Յոհանի
 հեզ մահտեսի Մկրտումի
 որ ի յերկրին արեւելքի
 ի քաղաքէն շոռոթեցի
 բարեպաշտօն ան իշխանի
 վարուքն պարկեշտ և գովելի
 որք համգիպիք սոյն տապանիս
 լիաբերան տուք ողորմիս
 թվ. ՌՄԼԸ = (1789) յունվարի 2 (6) իմ

Ե.

Այս է տապան համգիստարան գետաթաղցի
 զոստանդի որդի յեղուլիմ որ համգեաւ ի Բրիս-
 տոս ՌժՅՆ = (1726) իմ:

Զ.

Աստուածամօր խորանին պատկերին յիշատակարանը
 Յիշատակ շոռոթեցի Տէր Օհան որդի մի-
 Մկրտումի Ս. եկեղեցւոյն դուռն թոնովայի
 թվիմ ՌժԻՆ = (1676):

Է.

Այս է տապան Գետ(ս)աթաղցի որդի Ղաթանի
 մահտեսի խաչիկիմ համգեաւ ՌժՀԸ = (1729):

Ը.

Փորագրուած պատիկ մարմարիտն բարի վրայ (և
 կեղեցւոյն աջակողման պատին մէջ գետեղուած) ք-
 ղակուած խաչ մը որուն վրայ գրուած է եկեղեցւոյն
 նութեան թուականը՝ ՌժԸ = (1659):

Խաչ մը՝ որուն չորս ծայրերուն վրայ գրուած են ՏԼ
 ՅՍ. ԳԻ. ԱԾ. համառօտագրութիւններն և Յիշատակ
 է մահտեսի Մաղաքիմ որդւոյն, ՌժԸ = (1659):

Ս. Աւագան

Յիշատակ այս Աստուածածնայ Տէր
 համգէսիմ թոնովայի ՌժԾԱ = (1662) ամէն:

Հաւաքեց

Ս. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

Տարւոյս «Բաղմալէպ»-ի ցունուարի թուին հայկական արժագանգի բաժնին մէջ (էջ 95) տրուած
 խոստումն է որ կ'իրագործենք, մեր ընթերցողներուն և ամբողջ հայ հանրութեան ներկայացնելով ողբացեալ
 բանաստեղծ Ռ. Որբերեանի ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ ԵՒ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԱՍԻՆ: Ան ոչ
 միայն արժէքաւոր տեղեկութիւններու և տեսութիւններու ամփոփում մըն է անգլիացի մեծ բանաստեղծի
 հանճարին, փոթորկալից կեանքին և գաղափարներուն, այլ նաեւ ինքնին դնահատիկ որպէս յետին կայծ
 այդ ազնիւ հոգւոյն որ լապտերի մը կեանքն ունեցաւ միշտ արծարծելով հայ հայրենիքի պաշտամունքին և
 ազատութեան լոյսը սփռելով ամենուն սրտին մէջ: Այս տեսակետով գիտենք որ աւելորդ պիտի չնկատուին
 ողբացեալ Որբերեանի կեանքին հակիրճ գիծերը զորս կու տանք հոս՝ ուսումնասիրութեան սկիզբը:

ԽՄԲ.

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐԵԱՆ ծնած է 1874 տարին
 Մալաթիոյ մէջ, մանուկ հասակին կորսնցուցած
 է իր հայրը: Մայրը տեսնելով որ շատ ընդու-
 նակ է ուսման, խորհրդը զրկած է Եփրատ Գո-
 լէճի մէջ ուսանելու համար, դժբախտութիւնն
 ունեցած է քանի մը տարի վերջ յայրն ալ կոր-
 սնցնելու:

Իր տղայ հասակէն մեծ դիւրութիւն ունեցած
 է ուսանալու գրելու և զարդոցին մէջ բանաստեղ-
 ծութեան մրցումներուն անաշխի կը հանդիսա-
 նար, արդէն ինը տարեկանին իր մէկ ուսանա-
 ւորը տպուած է թերթի մը մէջ:

Տասնըվեց տարեկանին դպրոցն աւարտելով
 եկած է Պոլիս, հոն դասատուութեան քննու-
 թիւն անցընելու պարագային, զարմանք առած
 է քննիչներուն իր գրաբարի և գրականութեան
 մէջ ունեցած յաջողութեան համար: Պանարմա
 զրկած են զինքը դասատուութիւն ընելու, հոն
 քանի մը տարի մնալէն վերջ, Պոլսոյ ազգային
 վարժարաններու դասատու կոչուած է և 1896ին,
 պանքայի դէպքին, թեղաբնութեամբ Մեթիսե-
 դէկ Մուրաթեանց Սրբազանին՝ անցած է Իզմիր,
 ուր հինգ տարիի չափ դասատուութիւն ըրած է:
 Իզմիրի Ներսէսեան որբանոցի հիմնադիրներէն
 մին եղած է և մեծ գուրգուրանք ունեցած է այդ
 որբերուն համար:

Իզմիրի մէջ ամուսնացած է Օր. Մարի Միր-
 զայեանի հետ, թոռնորդի, բանաստեղծ ու գրա-

գէտ Տէր Յովհան Միրզա Վանանդեցիի (հեղի-
 նակ «Հայաստան երկիր դրախտավայր» ծանօթ
 և գեղեցիկ երգին): Մանչ գաւակ մը ունենալէն
 վերջ, որոշած է տեւտրական ասպարէզն ընդ-
 գրկել:

Չափազանց խանդավառ ազգասէր մ'ըլլա-
 լուն ստիպուած է հեռանալ Տաճկաստանէն և
 ձիպութի մեկնած է ընտանեօր ուր տասնութ
 տարիներ առեւտրով զբաղած է:

Սակայն ատիկա չէ արգիլած որ միշտ հին
 հայրենասէրը մնայ և աշխատի հայ գաղտը պաշտ-
 պանելու ամէն ձիպութիւն անցնող օտար բարձր
 անձնաւորութիւններուն մօտ:

Ռուս-ճաբոնական պատերազմին ժամանակ
 Daily Mail-ի թղթակիցն եղած է, ու յաջողած
 է այդ թերթին տնօրէն Lord North-Cliffe-ին
 բարեկամութիւնը վայելելու:

1914-ի մեծ պատերազմին առաջին օրէն կա-
 մաւոր գրուած է, ու ամբողջ այդ ժամանակա-
 միջոցին ձիպութի այրեցեալ արեւուն տակ իր
 պարտականութիւնը կատարած է սեւամորթները
 զինուորութեան պատրաստելով: Գաղթավայրին
 իր մատուցած ծառայութեան համար Գաղղիա-
 կան կառավարութիւնը իրեն տուած է Niehan-
 el-Anouar de Tahadjoura պատուանշան:

Տասնութը տարիներու ընթացքին որ ան-
 ցուցած է ձիպութի մէջ, այնքան սիրուած ու
 յարգուած է տեղական կառավարութենէն, նոյն-